ՀՈՎՀ. ՔԱՋԱԶՆՈՒՆՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՔՎՈՒՄ
(1905 թ. հայ-թաթարական ընդհարումների ժամանակ)

ՀԱՅԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Ռուսաստանում 1905–1907 թթ. տեղի ունեցած հեղափոխական իրադարձություններին մասնակցեց զարգացման տարբեր աստիճանների վրա գտնվող հպատակ ժողովուրդների մեծ մասը: Ցարական իշխանությունները քաջ գիտակցում էին այդ ժողովուրդների համերաշխության և միասնական գործողությունների ծանր հետևանքները: Այդ իսկ պատճառով կառավարությունը դիմեց փորձված միջոցի՝ նրանց միջև բորբոքելով կրոնական և ազգային թշնամանքը: Ցարիզմի այդ քաղաքականությունը կիրառվեց Կովկասում: Ակադեմիկոս Հ. Սիմոնյանը գրում է, որ երկրամասը հեղափոխական շարժումից հեռու պահելու ամենահարմար միջոցը համարելով հայերի և կովկասյան թուրքերի միջև ընդհարումներ առաջ բերելը, Կովկասի փոխարքա Գ. Ս. Գոլիցինը թուրքերին թույլ էր տվել զինվել, որպեսզի հարմար պահի նրանց ուղղի հայերի դեմ, իսկ եթե վերջիններս դիմադրություն ցույց տային, ապա նրանց մեղավոր ճանաչել ու պատժել[1]:

Կովկասի հայերի և թաթարների միջև թշնամություն սերմանելու կառավարության ջանքերը հաջողության են հասնում: Հայ-թաթարական առաջին ընդհարումը տեղի ունեցավ 1905 թ. փետրվարի 6–9-ը Բաքվում՝ նահանգապետ Մ. Նակաշիձեի սադրանքով: Թաթար խառնամբոխը հարձակվում է հայերի վրա, կողոպտում ու հրդեհում նրանց տները, արհեստանոցներն ու վաճառատները: Առաջին օրը սպանվեց մոտ 35 մարդ՝ 3–4 թուրք, մնացյալը՝ հայ: Ուշագրավ է, որ այդ օրվանից նկատվեց իշխանությունների և ջարդարարների թաքուն ու բացահայտ դաշինքը, երբ ոստիկանությունը, ինչպես և զորքը, չտեսնելու էր տալիս հայերի հանդեպ գործադրվող բռնություններն ու ավելի քան կասկածելի վերաբերմունք ցուցաբերում: Եվ այդ երևույթը նկատվեց ոչ միայն Բաքվում, այլև բախումնային բոլոր մյուս գոտիներում: Ամենից հատկանշականը, սակայն այն է, որ հայերը, սկզբնական շփոթությունից արագորեն սթափվելով, զինված դիմադրություն կազմակերպեցին Նիկոլ Դումանի (Նիկողայոս Տեր-Հովհաննիսյան) հմուտ ղեկավարությամբ: Իրականում հայ բնակչությունը պատրաստ չէր դեպքերի նման զարգացմանը: «Իհարկե,– գրում է Աբ. Գյուլխանդանյանը,–ոչ Բյուրոն և ոչ էլ Բաքվի Կ. Կոմիտեն (Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցության.– Հ. Մ.) սկզբի շրջանում չէին ենթադրում, որ հայ-թաթարական ընդհարումները այդքան մեծ ծավալ պիտի ստանան և տևեն երկու տարի, ինչպես որ եղավ դժբախտաբար: Հայերի զինումը հասկացվում էր միմիայն ինքնապաշտպանության և ոչ

[1] *Հ. Սիմոնյան. Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք 1, Երևան, 2003, էջ 45:*

հարձակման համար»[2]: Բաքվում գտնվող մարտական ուժերի այս կամ այն եղանակով ձեռք բերած սահմանափակ զենքերը նախատեսված էին հեռավոր վայրեր առաքելու համար: Իսկ փոքր պահեստներն էլ գտնվում էին քաղաքի ոչ մատչելի թաղամասերում: Դրանով հանդերձ, դիմադրությունը կազմակերպվեց և հաջողվեց՝ սահմանափակելով տրված զոհերի թիվը:

Բաքվի հայ բնակչության համար այդ օրհասական օրերին քաղաքի նավթարդյունաբերողների խորհրդի նավթաշրջանի մասի գլխավոր վարիչ, ինժեներ Հովհաննես Քաջազնունին գործնական մասնակցություն է ունենում ինքնապաշտպանության կազմակերպմանը: Իր հուշերում Մ. Շաթիրյանը գրում է. «Երբ տեղափոխվեցանք Բաքու և 1905 թ. հայ-թաթարական ընդհարումներն սկսվեցին, պետք եղան համարձակ մարդիկ, որ զորեղապես արտահայտեին հայության շահերը: Այդ ժամանակ Կոստ. Խատիսյանի (Բաքվի հայոց կուլտուրական միության նախագահ, Ռուսաստանի տեխնիկական ընկերության Բաքվի մասնաճյուղի նախագահ.– Հ. Մ.) կողքին հանդես եկավ Հովի. Քաջազնունին: Կ. Խատիսյանը լեգալ գործունեության մարդ էր և աշխատում էր ազդել իշխանության վրա: Քաջազնունին զենքի կողմնակից էր և կարծում էր, որ դրանով կարելի է ազդել թուրք խուժանի վրա: Մինչդեռ Խատիսյանը կողմնակից էր հանդիսավոր թափորների և հրապարակային համբույրների թուրքերի հետ, Քաջազնունին այդ միջոցները համարում էր անարժեք և կողմնակից էր մեր զինական կարողությունը մեծացնելուն, որով կարող էինք պատկառանք ազդել հակառակորդ կողմի վրա»[3]: Ապա, շարունակելով միտքը, ավելացնում է. «Եվ որովհետև մեր զինական ուժերի ղեկավարը Բաքվում Դումանն էր, ուստի Քաջազնունին մոտեցավ և մտերմացավ նրա հետ: Քանի որ այդ ժամանակները հաճախ առիթ էր լինում գրավոր հարաբերության մեջ մտնելու թեԲ կառավարության և թեԲ հակառակորդի հետ, ինչպես և հանդես գալու պարբերական մամուլում՝ Քաջազնունին իբրև ընտիր գրչի տեր, փայլուն կերպով տարավ մեր ինքնապաշտպանության գործի այդ կողմը»[4]:

Փետրվարի վերջերին Բաքվում կայացած խորհրդաժողովում որոշվում է ՀՀԴ կենտրոնական կոմիտեներին կից ստեղծել Զինվորական մարմին, որը պետք է զբաղվեր ինքնապաշտպանության կազմակերպման խնդիրներով: Ընտրվում են Զինվորական մարմնի անդամները՝ Նիկոլ Դուման, Աբրահամ Գյուլխանդանյան և Հովհաննես Քաջազնունի[5]: Զինվորական մարմնի կազմում վերջինիս ընդգրկելն ամենևին պատահական չէր: «...կարևոր դրպեներին,– վկայում է Աբ. Գյուլխանդանյանը,– Քաջազնունին, իբրև Զինվորական մարմնի անդամ, պիտի կարողանար ազդել թե՛ թաթարների

---

[2] *Աբ. Գ յ ո ւ լ խ ա ն դ ա ն յ ա ն. Հայ-թաթարական ընդհարումները Բաքվի մեջ.– «Հայրենիք» (Բոստոն), 1933, -11, էջ 154:*

[3] *Մարտին Շաթիրյանի հուշերից, Հայոց հասարակական շարժումների պատմությունից, գրի առավ Ն. Աղբալյանը.– «Հայրենիք», 1923, -6, էջ 61:*

[4] *Նույն տեղում:*

[5] *Հ. Գ և ո ր գ յ ա ն. Ազատագրական պայքարի կովկասյան ճակատը, Երևան, 2010, էջ 76:*

և թե՛ հայ բուրժուազիայի վրա՝ ինքնապաշտպանության համար նյութական հասույթները ավելացնելու համար...»[6]:

Այդ օրհասական օրերին Բաքվի հայ բուրժուազիան, կղերական և մտավորական դասերը գտնվում էին շփոթի և հուսահատության մեջ: Եվ ակամա հույսի միակ նշույլ նրանք տեսնում էին միայն ՀՀԴ-ին՝ հանձին Ն. Դումանի: Վերջինիս գլխավորությամբ հայերին հաջողվում է հուժկու հարված տալ թաթար ջարդարարներին: Սա էլ հենց դառնում է այն հիմնական պատճառը, որ փետրվարի 9-ին նահանգապետն իր մոտ է հրավիրում հայ և թաթար համայնքների ներկայացուցիչներին, ու կարճատև բանակցություններից հետո հայերը համաձայնում են թաթարների արած հաշտության առաջարկին: Ի դեպ, Ա–Դո-ն (Հովհաննես Տեր-Մարտիրոսյան) գրում է. «Երեք օրվա ընթացքում սպանվել էին. հայեր՝ 205, թուրքեր՝111, վիրավորվել էին. հայեր՝ 121, թուրքեր՝ 128. շուրջ 565, բացի անհայտ մնացած զոհերը: 205 սպանված հայերից 7-ը կանայք էին, 20-ը երեխաներ և 13 ծերունիներ»[7]:

Հովհ. Քաջազնունին սկսում է եռանդուն աշխատել հայերի և թաթարների հաշտեցման ուղղությամբ: Նա առաջիններից մեկն էր, ով հրապարակայնորեն մերկացրեց իշխանության գործակալների սադրիչ դերը: Հաշտությունից հետո Բաքվում տեղի էին ունենում բնակչության բազմահազարանոց հանրահավաքներ ու ժողովներ, որտեղ քննադատում էին իշխանություններին՝ դեպքերի նմանատիպ զարգացման համար: Աբ. Գյուլխանդանյանը գրում է. «Հաշտությունից անմիջապես հետո, Բաքու քաղաքում սկսվեցին աննախընթաց ժողովներ:

Կովկասյան տարեգրության մեջ առաջին անգամն էր, որ առանց թույլտվության, առանց ոստիկանության մասնակցության, Բաքվի ազգաբնակությունը առանց սեռի և ազգի խտրության հայ, հրեա, ռուս, թաթար և օտարազգիներ համախմբված ավելի քան երեք-չորս հազար հոգի, քննում էին եղած դեպքերը, դատափետում էին ռուս կառավարությունը և իրենց զզվանքն ու բողոքն էին հայտնում կատարված ոճիրների համար»[8]:

Փոթորկալից էր հատկապես փետրվարի 11-ին տեղի ունեցած առաջին հավաքույթը: Հատկանշական է, որ երբ նախագահողը խոսքը տալիս է թաթար պարագլուխներից մեկին՝ Ա. Աղանին, դահլիճում սոսկալի աղմուկ է բարձրանում, և հայ, ռուս և այլազգի հասարակությունը սկսում է բողոքել՝ նրան ձայն տալու համար: «Կորչի՛Ք ոճրագործը, չենք ուզում լսել. թող նա լվանա իր արյունոտ ձեռքերը և ապա միայն երևա հասարակության:

Զայրացած ամբոխը կարծես թե շարժվում էր դեպի բեմը: Աղաևը կանգնած էր գունատ ու դողդողում էր. խոսքը մեռել էր բերանին…

Դժվար էր երևակայել, թե ինչո՞վ կարող էր վերջանալ այս բոլորը, եթե չմիջամտեր Հ. Քաջազնունին, որ դառնալով հասարակությանը՝ հորդորեց լռել և թույլ տալ,

---

[6] *Աբ.Գ յ ո ւ լ խ ա ն դ ա ն յ ա ն. նշվ. հոդվ., էջ 158:*

[7] *Ա–Դո. Հայ-թաթարական ընդհարումը Կովկասում (1905–1906 թթ. փաստական, վիճագրական, տեղագրական լուսաբանություններով), Երևան, 1907, էջ 30:*

[8] *Ա բ. Գ յ ո ւ լ խ ա ն դ ա ն յ ա ն. Հայ-թաթարական ընդհարումները, հ. առաջին, Բաքվի առաջին ընդհարումները, Փարիզ, 1933, էջ 117:*

որ Աղանը խոսի: Հ. Քաջազնունու անակնկալ միջամտությունը զգաստացրեց հասարակությանը և Աղանը, որ արդեն կորցրել էր իր համարձակությունը, մեծ դժվարությամբ կարողացավ այդ օրը մի քանի խոսք ասել»[9]:

Փետրվարի 12-ի և 13-ի կայացած ժողովների արդյունքը եղավ այն, որ ստեղծվեց հայ, թաթար և ռուս ներկայացուցիչներից կազմված խաղաղարար հանձնախումբ: Հայերից հանձնախմբին մասնակցում էին իրավաբան, նավթարդյունաբերող Բոգդան Դոլուխանյանը, ինժեներ, Բաքվի բորսայի կոմիտեի նախագահ Ստեփան Թաղիանոսյանը, Բաքվի տեխնիկական ընկերության նախագահ Կոստանտին Խատիսյանը, տեխնիկական ընկերություններից մեկի վարիչ Հայկ Տեր-Միքայելյանը, բժիշկ Թադևոս Զաքարյանը, նավթարդյունաբերող և ինժեներ Աստվածատուր Վայյանը, փաստաբան Սամսոն Հարությունյանը, ինժեներ Հովհաննես Քաջազնունին: Թուրքերի կողմից հանձնախմբին մասնակցում էին իրավաբան, «ԽՈՐտՈռ» թերթի մնայուն տնօրեն, թուրքական հասարակական մտքի ղեկավար Ալի Մարդան Թոփչիբաշիևը, նույն թերթի խմբագիր Ահմեդ Աղանը, Բաքվի քաղաքապետարանի անդամ Իսրաֆիլ Հաջիևը, մեծահարուստ Հաջի Ասլան Աշուրովը, քաղաքային վարչության անդամ, ինժեներ Հասան Մահմեդ Հաջինսկին, Մուխտարովի նավթահանքերի գլխավոր կառավարիչ, ինժեներ Բախշի բեկ Թալիշխանովը և ուրիշներ[10]: Հանձնախումբը, սակայն, չկարողացավ կատարել իր դերը հայ և թաթար անդամների՝ հարցի շուրջ ունեցած իրենց պատկերացումների ու հայացքների տարբերության պատճառով: Նիստերի ընթացքում հաճախ տեղի էին ունենում ընդհարումներ, և ստիպված հանձնախմբի ռուս անդամներն էին նրանց հաշտեցնում: Խաղաղարար հանձնախումբն անկարող եղավ փոխել այն լարված իրավիճակը, որ տիրում էր Բաքվում: Արդյունքում մի քանի ամսից այն լուծարվում է:

Բաքվի բնակչության ալեկոծ կյանքը չէր հանդարտվում, քանի որ լուրեր էին պտտվում, որ Անդրկովկասի մյուս քաղաքներում էլ են տեղի ունենում հայ-թաթարական ընդհարումներ: Անհանգստությունն ավելի է սաստկանում, երբ մայիսմեկյան տոնակատարությունների ժամանակ Բաքվում տեղի ունեցած ցույցերն ավարտվում են ոստիկանության և բնակչության զանգվածային բախումներով: Իրավիճակն ավելի է սրվում, երբ օգոստոսի 20–30-ին Բաքվում տեղի են ունենում հայ-թաթարական նոր ընդհարումներ: Արդյունքում՝ նոր զոհեր են լինում, իսկ քաղաքի նավթահանքերի մեծ մասն այրվում է, ընդ որում՝ հիմնականում հայերին պատկանող նավթահանքերը: Ա–Դո-ն գրում է. «Մոտավոր հաշվով վնասը հասնում էր 25 միլիոն ռուբլու, որի շատ մեծ մասը հասել էր հայ ֆիրմաներին, որովհետև հենց նրանց դեմ էլ ուղղված էր եղել հրդեհը, թեև հրեղեն լեզուները լափել էին պատահածը անխտիր»[11]:

---

[9] *Նույն տեղում, էջ 120–121:*

[10] *Հ. Սիմոնյան. նշվ. աշխ., էջ 115, Ա բ. Գյուլխանդանյան. Հայ-թաթարական ընդհարումները, հ. առաջին, էջ 162–174:*

[11] *Ա–Դո. նշվ. աշխ., էջ 36:*

Մինչ այդ, Կովկասի հայատյաց փոխարքա իշխան Գ. Ս. Գոլիցինին փոխարինում է կոմս Ի. Ի. Վորոնցով-Դաշկովը: Ժամանելով Թիֆլիս՝ նա իր անհետաձգելի գործերից մեկը համարեց հանդիպել երկրամասի ազգությունների ներկայացուցիչների հետ: 1905 թ. հունիսի 1-ին փոխարքան հանդիպեց նաև հայերի 15 հոգանոց պատվիրակությանը: Նկատենք, որ, բացի այս պատվիրակությունից, Բաքվի հայերը ևս առանձին պատվիրակություն են ուղարկել փոխարքայի մոտ: «Բաքվի հայերի կողմից ներկայացավ Կովկասի փոխարքային մի պատգամավորություն հանձին Անանիա եպիսկոպոսի և պ. պ. Բ. Դոլուխանյանի ու Հ. Քաջազնունու»[12],– հաղորդում է «Մշակ» թերթը: Ընդունելով հայ պատվիրակներին՝ կոմսը սկզբում լսում է Անանիա եպիսկոպոսին, որը նաև գրավոր զեկույց էր պատրաստել: Պատվիրակության անդամները բացատրում են, որ հայ բնակչությունն ամեն ինչ արել է, որպեսզի հասնի բաղձալի խաղաղության, սակայն մուսուլմանների ներկայացուցիչները ցանկացել են համաձայնության մեջ մտցնել այնպիսի լրացումներ ու սահմանափակումներ, որոնք զրոյի են հավասարեցնում փոխադարձ երաշխավորության ողջ նշանակությունը: Ուշագրավ են Հ. Քաջազնունու նկատառումները, թե ինչու հայերին ցանկալի չէ խաղաղության խախտումը, և թե ինչու նրանք ամեն կերպ աշխատում են այն վերականգնել, երբ որևէ պատճառով խաղաղությունը խախտվում է: «Գոյության կռվի մեջ՝ բռնությունների ճանապարհը ընտրելը հայի բնավորության մեջ չկա. բացի դրանից ծագած կռիվը սպառնում է հայերին, իբրև ավելի թույլ կողմին, կատարյալ ավերումն. ենթադրել, որ հայերը ցանկանում են զինված ընդհարում թուրքերի հետ – կնշանակե ենթադրել, որ նրանք վճռել են ինքնասպանություն գործել: Հայերի համար կենսականապես կարևոր է, որ այդ պարզ ճշմարտությունը կառավարությունը ի նկատի ունենա»[13]: Հանդիպման վերջում փոխարքան հույս է հայտնում, որ թե՛ թուրք և թե՛ հայ ազգաբնակչությունն ու հատկապես հայ տարրը, քանի որ նա ավելի հարուստ և լավ պատրաստված մտավորականություն ունի, կկարողանա խաղաղեցնել երկու ժողովուրդների կրքերն ու կնպաստի իշխանություններին՝ վերականգնելու համար խաթարված կարգուկանոնը:

Հետագա դեպքերը, սակայն, ցույց տվեցին, որ Վորոնցով-Դաշկովը ոչնչով չի տարբերվում Գոլիցինից, և հայ-թաթարական հարաբերություններն ավելի են թեժանում: Ստեղծված իրավիճակում հայերին ուրիշ ոչինչ չէր մնում, քան դիմել ինտենսիվ զինման ու կազմակերպել բնակչության ինքնապաշտպանությունը: Դեռևս 1905 թ. մարտին Բաքվի ՀՀԴ Ոսկանապատի կենտրոնական կոմիտեն կազմում է զինվորական ֆոնդ (սա հատուկ մարմին էր, որը կուսակցության համար հայթայթում և նրան ապահովում էր ռազմամթերքով)[14]: Ուշագրավ է, որ պահի կարևորությունը գիտակցում էին նաև Բաքվի որոշ հայ մեծահարուստներ. Նրանք 75.000 ռուբլի գումար են տրամադրում Բաքվի ՀՀԴ կենտրոնական կոմիտեին՝ զենք գնելու նպատակով՝ պայմանով, որ հետագայում այն չի ուղղվի իրենց դեմ:

---

[12] *«Մշակ» (Թիֆլիս), 27. IX. 1905:*

[13] *Նույն տեղում:*

[14] *Նյութեր Հ. Հ. Դաշնակցության պատմության համար, հ. Ե, Բեյրութ, 2007, էջ 6:*

«Սա մեր հարուստների կյանքում գուցե առաջին փաստն էր, որ իրանք իրանց հոժար կամքով փող էին բերում ինքնապաշտպանության գործը կազմակերպելու համար. բայց շարժառիթը հասկանալի է, նրանք մտածում էին միմիայն և միմիայն իրանց մասին»[15]: Սակայն նմանատիպ դեպքերը սակավաթիվ էին. մեծահարուստներից շատերը պինդ փակել էին իրենց քսակները: Այդ էր պատճառը, որ ՀՀԴ-ն ստիպված նորից ակտիվացնում է «Փոթորիկ»-ի բռնի հանգանակությունները (դա ՀՀԴ-ի կողմից կազմակերպված գործողություն էր՝ ազատագրական պայքարի համար հայ մեծահարուստներից գումար հավաքելու համար): 1905 թ. հոկտեմբերի սկզբին Հովի. Քաջազնունին կուսակցության հանձնարարությամբ մեկնում է Ս. Պետերբուրգ: Շուրջ մեկ ամիս մնալով Ս. Պետերբուրգում՝ նա վերադառնում է Կովկաս և մասնակցում նոյեմբերի 13-ից դեկտեմբերի 1-ը Թիֆլիսում գումարված ՀՀԴ կովկասյան ռայոնական ժողովին: Ժողովի նպատակն էր ամփոփել հայ-թաթարական ընդհարումների արդյունքները և որոշել կուսակցության հետագա անելիքները: Ժողովին մասնակցում էին Համազասպ Սրվանձտյանը, Ավետիք Իսահակյանը (Գուսան), իշխան Հովսեփ Արղությանը (Իշխան), Հարություն Շահրիկյանը, Արմեն Գարոն, Համո Օհանջանյանը, Եղիշե Թոփչյանը, Գարեգին Խաժակը, Ավետիք Սահակյանը (Հայր Աբրահամ), Ավետիս Ահարոնյանը, Աբրահամ Գյուլխանդանյանը և ուրիշները[16]:

Հովի. Քաջազնունին ակտիվ մասնակցություն ունեցավ ժողովի աշխատանքներին՝ հանդես գալով մի շարք առաջարկություններով: Մասնավորապես, երկար վիճաբանություն եղավ հայ-թաթարական ընդհարումների խնդրում որդեգրելիք տակտիկայի շուրջ: Ժողովականներից ոմանք՝ Համազասպը, Իսահակյանը, Շահրիկյանը, Գարոն և Քաջազնունին, կարծում էին, որ պատրաստություններ տեսնելուց հետո թաթարները դիմելու են նոր, էԼ ավելի ուժգին հարձակումների, ուստի պետք է նախահարձակ լինել: Ժողովականների մյուս մասը՝ Համո Օհանջյանը, Իշխանը և այլք, համարում էին, որ պետք է դիմել հաշտության, խաղաղության: Քվեարկության է դրվում 2 բանաձև՝ Իշխանի, որ դեմ էր նախահարձակման, և Հովի. Քաջազնունու, որն ընդունում էր դրա անհրաժեշտությունը: Երկու բանաձևերից, սակայն, մշակվում և ընդունվում է հետևյալ բանաձևը. «Ընդունում ենք, որ մեր իղձը հաշտություն է և ոչ կռիվ թուրքերի հետ: Ընդունում ենք, որ այս կռվի պատճառներից մեկն էլ ռուս կառավարության պրովակացիան է: Ընդունում ենք, որ մենք կռվի ենք բռնվել ակամայից և հաստատ հաշտությունը չի կարող կայանալ, մինչև թուրքերը չհամոզվեն, թե իրենց դեմ մի ուժ ունեն, որն ընդունակ է ինքնապաշտպանության և որ հարձակման դեպքում՝ պատրաստ է խստիվ պատժել հարձակվողին: Ընդունում ենք, որ այդ պայմաններն ստեղծելու համար մեզ անհրաժեշտ է միշտ կռվի և ընդդիմության պատրաստ լինել: Բայց պատրաստ լինելով ընդդիմադրության՝ մենք երբեք նախահարձակ չպետք է լինենք այն տեղերում, ուր թուրք տարրը թույլ է կամ իր բռնած դիրքով

---

[15] *Նույն տեղում, էջ 6–7:*

[16] *Հ. Ս ի մ ո ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 421–422, Նյութեր Հ. Հ. Դաշնակցության պատմության համար, հ. Բ, Բեյրութ, 1985, էջ 236–237:*

մեզ վտանգ չի սպառնում: Միանգամայն մերժելով նախահարձակման տակտիկան՝ ընդունում ենք, որ այն տեղերում և դեպքերում, ուր մեզ պարզից էլ պարզ վտանգ է սպառնում թուրքերի բռնած դիրքից. դիրք, որ այսօր-վաղը կարող է բացարձակ հարձակման վերածվել, այդ տեղերում և այդ դեպքերում ոչ միայն ընդունում ենք նախահարձակման ինիցատիվը, այլև պարտավորական ենք համարում»[17]:

Հետաքրքրական էր նոյեմբերի 19-ի նիստը, որտեղ քննարկվում է «Մեր տակտիկը Ռուսաստանում» մարտավարությունը: Նիստում ելույթ են ունենում համարյա բոլորը. թե՛ ՀՀԴ - մարմինների ներկայացուցիչները և թե՛ անհատ անձինք կարծում էին, որ Ռուսաստանում կուսակցության գործունեության ծավալումն անհրաժեշտություն է՝ չնայած ժողովականների մի մասի մոտ կար բնական վախ, որ ՀՀԴ կովկասյան գործունեությունից կտուժի թուրքահայ դատը, և խորհուրդ էին տալիս զգուշաբար մոտենալ ռուսական հեղափոխությանն ու պայքարի մեջ մտնել այն պահին, երբ հստակ կլինի ցարական ռեժիմի անկումը: Բուռն վիճաբանություններից հետո բոլորը համաձայնում են Կովկասում գործունեություն ծավալելուն, որի նպատակն է լինելու ունենալ դեմոկրատական, ֆեդերատիվ Ռուսաստան: Այս խնդրի շուրջ Հովի. Քաջազնունին հետևյալ կարծիքն ուներ. «Որպես հեռավոր իդեալ ինձ համար էլ ցանկալի է ֆեդերացիան, բայց կովկասյան պառլամենտի հավաքման օրը կլինի և ընդհանուր կովկասյան պատերազմ հայտարարելու օրը: Որպես իրավականորեն վնասակար՝ մեզ համար չպետք է ցանկալի լինի ո՛չ ֆեդերացիան, ո՛չ ավտոնոմիան: Մեզ հարկավոր է լայն տեղական ինքնավարություն և մանր զեմստվոյական միություն»[18]: Ի վերջո, ընդունվում է հետևյալ բանաձևը. «Հ. Հ. Դաշնակցությունը ընդունում է Անդրկովկասի համար ֆեդերատիվ կազմ, իբրև քաղաքական նպատակ, իսկ իբրև անմիջական պահանջ՝ Անդրկովկասի ավտոնոմիա՝ հիմնված ռազմավարական սկզբունքների վրա և կապված Ռուսաստանի հետ՝ ֆեդերատիվ ձևով»[19]: Իսկ որպես տակտիկա՝ ժողովը բանաձևեց, որ ՀՀԴ-ն իր վերջնական նպատակին հասնելու համար ձգտում է դեմոկրատական ֆեդերատիվ կառավարություն թե՛ Ռուսաստանի և թե՛ ծայրագավառների համար: Բանաձևերից պարզ երևում է, որ ժողովն ընթանում էր ՀՀԴ խորհրդի կողմից 1905 թ. մայիսին հրապարակված «Կովկասյան նախագծի»[20] դրույթներին համահունչ: Հովի. Քաջազնունին նույնպես կողմ էր կուսակցության ծրագրի վերանայմանը և գործունեության ընդլայնմանը՝ ցարական ռեժիմի դեմ պայքարի ներառմամբ: Այս հարցերից բացի՝ ժողովը որոշում ընդունեց նաև զինվորական մարտական ուժերը պահպանելու նպատակով միլիցիա ունենալու անհրաժեշտությունը, իսկ եղած մարտական ուժերը նպատակահարմար գտավ լուծարել: Ռայոնական ժողովը միաժամանակ հրահանգում է ՀՀԴ տեղական մարմիններին, ըստ ստեղծված իրավիճակի, զինված դիմադրություն ցույց տալ ռուսական զորքին: Ժողովը լուծարեց նաև պատասխա-

---

[17] *Նյութեր Հ. Հ. Դաշնակցության պատմության համար, հ. Բ, էջ 238:*

[18] *Նույն տեղում, էջ 241:*

[19] *Նույն տեղում, էջ 242:*

[20] *Հ. Հ. Դաշնակցություն, նախագիծ Կովկասյան գործունեության, Ժնև, 1908:*

նատու մարմինը, որը ստեղծվել էր հայ եկեղեցու գույքը բռնագրավելու դեմ պայքարը Կովկասում ղեկավարելու համար:

Ռայոնական ժողովը դեկտեմբերի 1-ին ավարտեց իր աշխատանքները, քանի որ Թիֆլիսում սկսվում են հայ-թաթարական ընդհարումներ: Դրանք ստիպեցին Վորոնցով-Դաշկովին ինչ-ինչ քայլեր ձեռնարկել: Որոշվեց հրավիրել հայ-թաթարական հաշտեցման հերթական համագումար. երկար բանակցությունները փոխարքայի օգնական Յ. Դ. Մալամայի և Ամենայն հայոց կաթողիկոս Խրիմյանի միջև ներկայացուցիչների թվի վերաբերյալ ավարտվում են համաձայնությամբ, և որոշվում է, որ հայ ու թաթար հասարակությունները համագումարին ուղարկելու են 30-ական պատգամավոր: Հովհ. Քաջազնունին նույնպես ընտրվում է համագումարի պատգամավոր, բայց դրան չի մասնակցում, քանի որ Հ. Հ. Դաշնակցության հանձնարարությամբ հատուկ առաքելությամբ 1906 թ. փետրվարի սկզբին մեկնում է Ս. Պետերբուրգ, ապա՝ արտասահման[21]:

Այսպիսով՝ ամփոփելով պետք է նշել, որ Հովհ. Քաջազնունին, հայ-թաթարական ընդհարումների ժամանակ լինելով Բաքվի հայ ազգաբնակչության մեջ ազդեցիկ և հեղինակավոր անձանցից մեկը, այդ օրհասական օրերին անմիջական ու գործնական մասնակցություն է ունենում հայ բնակչության ինքնապաշտպանության կազմակերպման գործում:

ДЕЯТЕЛЬНОСТЬ ОВ. КАЧАЗНУНИ В БАКУ
(В период армяно-татарских столкновений в 1905 г.)

АЙК МАРТИРОСЯН

Резюме

В 1905–1907 гг. в России вспыхнула первая революция. И для того, чтобы Кавказ не был вовлечен в революционное движение, царское правительство обратилось к уже испробованному средству – разжиганию религиозной и национальной вражды между армянами и кавказскими татарами. Первое армяно-татарское столкновение произошло 6–9 февраля 1905 г. в Баку. В первый день было убито около 35 человек, из них 3–4 татарина, остальные — армяне. Армяне организовали вооруженное сопротивление. Партия АРФ Дашнакцутюн сформировала военный орган, Ов. Качазнуни был избран его членом, активно участвовал в организации самообороны. После контрудара, организованного армянами 9 февраля, Ов. Качазнуни начал усердно работать над предложением по примирению. Создалась смешанная комиссия, в которую входили армянские, татарские и русские представители. Но комиссия не выполнила свою роль по причине несовпадения точек зрения армянских и татарских представителей. А армяно-татарские столкновения, которые произошли в Тифлисе, заставили наместника царя И. И. Воронцова-Дашкова

[21] *Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Հովհ. Քաջազնունու ֆ., թ. 4212, գ. 86, թ. 1:*

предпринять соответствующие шаги. В связи с этим решили созвать армяно-татарский очередной съезд по примирению. Ов. Качазнуни был избран депутатом, но не участвовал в работе сьезда, т. к. в начале февраля по решению партии Дашнакцутюн был направлен в Санкт-Петербург, затем–заграницу.

HOVH. KAJAZNUNI'S ACTIVITY IN BAKU
(During Armenian-Tatar clashes in 1905)

HAYK MARTIROSSYAN

S u m m a r y

The first revolution in Russia broke out in 1905 – 1907. In order to keep the Caucasus from the intervention in the revolutionary movement the tsarist autocracy turned to an already well-practiced method – facilitating religious and nationalistic confrontations between Armenians and Caucasian Tatars. The first Armenian-Tatar clashes occurred in Baku, on February 6 – 9, 1905. Almost 35 people died during the first day of the clashes, 3–4 of whom were Tatars, and the others were Armenians. Armenians organized an armed defense. Party A.R.F. Dashnaktsutyun formed a military authority, Hovh. Kajaznuni was elected a member, had an active role in the organization of self-defense. After the counterattack organized on February 9 by the Armenians, Hovh. Kajaznuni began to work hard on the suggestion on reconciliation. A mixed commission was created, which consisted of Armenian, Tatar and Russian representatives. But the commission was failed because of Armenian and Tatar representatives' different points of view. Armenian-Tatar clashes that occurred in Tiflis, made I.I.Vorontsov-Dashkov's viceroy carry out some appropriate steps. In this connection, they decided to organize the Armenian-Tatar congress on reconciliation. Hovh. Kajaznuni was elected a deputy, but he didn't take part in the congress, because by the decision of the party A.R.F. Dashnaktsutyun at the beginning of February he was sent to St. Petersburg, then – abroad.